ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 18-21-Ը ՇՎԵԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
   Արմեն Սիմոնյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
   Շվեդիայի Թագավորություն (Ստոկհոլմ), 2020թ. փետրվարի 18-ից 21-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Շվեդիայի Թագավորության ենթակառուցվածքների նախարար

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**
   Մասնակցություն «Հասնելով գլոբալ նպատակներ 2030-ին» խորագրով ճանապարհային անվտանգության ոլորտում նախարարական 3-րդ համաշխարհային համաժողովին:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Քննարկվել են ճանապարհային անվտանգության ոլորտում գործողությունների տասնամյակի գլոբալ ծրագրի իրականացման հաջողությունները և լավագույն փորձը, գծանշվել են հետագա ռազմավարական ուղղությունները ճանապարհային անվտանգության համար մինչև 2030թ:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Այցի ընթացքում հանդիպում եմ ունեցել Լիտվայի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ Գիտիս Մաժեյկայի հետ. քննարկել ենք ծրագրի իրականացման փուլերը և պայմանավորվել ճանապարհային անվտանգության հարցերի վերաբերյալ լրացուցիչ հանդիպում կազմակերպել Երևանում:
   Հանդիպում եմ ունեցել նաև Համաշխարհային բանկի գլոբալ ճանապարհային անվտանգության հաստատության ղեկավար Սոամես Ջոբի հետ. քննարկել ենք ավիացիոն անվտանգությանը և զարգացմանը վերաբերող հարցեր: Քննարկում ենք ունեցել նաև երկաթուղային տրանսպորտի զարգացման, ինչպես նաև՝ ճանապարհային անվտանգության՝ այդ թվում Հայաստանում տեխնիկական զննության հետ կապված կարգավորող հարցերի շուրջ: Իրենց կողմից հավանության է արժանացել տեխնիկական զննության հարցերի հետ կապված մեր կողմից ներկայացված հայտը:
   Հանդիպել եմ նաև Ուկրաինայի ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Նատալյա Ֆորսյուկի հետ: Վերջինիս հետ քննարկել ենք Ուկրաինայից (Հայաստանի Հանրապետության տարածքով) դեպի Իրանի Իսլամական Հանրապետություն տարվող ապրանքների հնարավոր ուղիները:
   Քննարկում եմ ունեցել Ասիական զարգացման բանկի տրանսպորտի ոլորտը համակարգող ղեկավարի հետ: Պայմանավորվածություն ենք ձեռք բերել ճանապարհային անվտանգության ոլորտին վերաբերող տարբեր հարցերի շուրջ քննարկում իրականացնել Երևանում:
   Այցի ընթացքում հանդիպումներ եմ ունեցել նաև Համաժողովին մասնակցող այլ երկրների պատվիրակների հետ:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Այցի արդյունքերով փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Շարունակական աշխատանքներ տանել ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ուղղությամբ:

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ**

25 փետրվարի 2020թ.

/Արմենուհի Հ.-Հ./